

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/4

2 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց «էդ. և Կար» ՍՊԸ 21.06.2013 թ-ի դիմումով բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի աշխատակիցների գործողությունների և դրանց արդյունքում կազմված 18.06.2013 թ-ի հսկիչ գնում կատարելու վերաբերյալ արձանագրության դեմ:

«էդ. և Կար» ՍՊԸ տնօրենի գանգատում մասնավորապես նշված է.

«էդ. և Կար» ՍՊԸ-ն ք.Գավառ, Բոշնադյան 17 ա հասցեում գտնվող տարածքում իրականացնում է ավիատոմսերի վաճառք: Ընկերությունն ունի գրասենյակային սարքավորումներ, այդ թվում նաև պատճենահանող սարք:

Պատճենահանող սարքը դրված է ՀԴՄ սարքից մոտ 3 մետր հեռավորության վրա:

18.06.2013 թ-ին «էդ. և Կար» ՍՊԸ տարածք է այցելել մի անձ և ցանկացել է տրանսպորտային միջոցի գրանցման վկայականը պատճենահանել: Պատճենահանումից հետո վճարել է 100 դրամ, ստացել է 50 դրամ մանրը և շտապ դուրս է եկել, չսպասելով վերցնել ՀԴՄ կտրոնը, որը նույն ժամանակահատվածում՝ մանրը վերադարձնելուց հետո, ընկերության աշխատակցի կողմից մուտքագրվել է ՀԴՄ:

Այնուհետև, մի քանի րոպե անց, ներս վերադառնալով նշել է, թե իրեն ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Նրան ցույց է տրվել ՀԴՄ կտրոնը և հայտնվել է, որ եթե շտապ դուրս չգար, ապա կարող էր վերցնել ՀԴՄ կտրոնը: Այդ խոսակցության ընթացքում ներս է եկել մեկ այլ անձ և առանց իրավիճակին ծանոթանալու և ներկայանալու, հրամայական տոնով հայտնել է, որ պետք է ՀԴՄ-ն գրոյացնել:

Ես փորձել եմ տեղեկանալ, թե ինչ է պատահել, ովքեր են հանդիսանում նրանք: Այցելուները հայտնել են, որ հարկային տեսչությունից են, սակայն հրաժարվել են ներկայացնել իրենց անձը հաստատող որևէ փաստաթուղթ: Իմ պահանջին, որ ներկայացնեն անձը հաստատող փաստաթղթերը, նշել են, որ իբր ես նրանց աշխատանքը խոչընդոտում եմ: Սակայն իմ պահանջն ընդամենը եղել է մեկը, որ ներկայացնեն անձը հաստատող փաստաթղթերը: Ես մի քանի անգամ նշել եմ, որ որևէ ձևով չեմ խոչընդոտում իրենց աշխատանքը, միայն ցանկանում եմ հասկանալ, թե ովքեր են նրանք:

Չներկայացնելով անձը հաստատող փաստաթղթերը նրանք հեռացել են: Մի քանի օր անց փոստային կապի միջոցով ստացել եմ «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի առանց ամսաթվի գրությունը, որին կից եղել է թիվ 1104718 հանձնարարագրի և 18.06.2013 թ-ի արձանագրության պատճենները:

Նշեմ, որ այդ արձանագրության մեջ նշված տվյալները չեն համապատասխանում իրականությանը, ես որևէ ձևով չեմ զագրախոսել, այլ հակառակը՝ նրանք են կոպիտ և պաշտոնատար անձին ոչ հարիր վարքագիծ դրսևորել: Արձանագրությամբ նշված է, թե գումարն իբրև ՀԴՄ չի մուտքագրվել, սակայն ինչպես նշեցի՝ մուտքագրվել է: Ընդ որում, իմ և ընկերության աշխատակցի ներկայությամբ որևէ արձանագրություն չի կազմվել: Փոստով ուղարկված արձանագրության մեջ նշված է, թե իբր ժամը 14:02-ին կատարվել է հսկիչ գնում, մինչդեռ հսկիչ գնումը, եթե այն իրականում այդպես է եղել, կատարվել է 14:22-ին, որի վերաբերյալ ինչպես նշեցի, առկա է ՀԴՄ կտրոնը: Արձանագրությունը կազմվել է հետագայում, որով փորձել են մեկնաբանել, թե հսկիչ գնումը կատարվել է և ՀԴՄ չի մուտքագրվել: Արձանագրությունում նշված է նաև, որ ինձ տրամադրվել է

հանձնարարագիրը և ծառայողական վկայականները, որոնց ես ծանոթացել եմ, մինչդեռ նշվածն ակնհայտ սուտ է և չի համապատասխանում իրականությանը: Եթե ինձ տրվեր հանձնարարագիրը, ապա ես այն ստորագրությամբ կստանայի, իսկ ծառայողական վկայականների մասով նշեմ, որ բազմիցս պահանջել եմ ներկայացնել դրանք, սակայն չեն ներկայացվել: Արձանագրությունում նշված է նաև, որ իբր ես ծանոթանալով հանձնարարագրին նշել եմ, որ այն կեղծ է, սակայն ևս մեկ անգամ նշեմ, որ չեմ ծանոթացել հանձնարարագրին, իսկ կեղծ բառն իմ կողմից օգտագործվել է անձը հաստատող փաստաթուղթ չներկայացնելու ժամանակ, երբ ես նրանց հայտնել եմ, որ միգուցե իրենց գործողությունները կեղծ են, և նրանք հարկային տեսչության աշխատակիցներ չեն հանդիսանում:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ անհիմն համարել 18.06.2013 թ-ի արձանագրությունը և հիմք ընդունել կատարված պատճենահանման դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնը (պատճենը կցվում է):

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Էդ. և Կար> ՍՊԸ տնօրենի և արձանագրությունը կազմած անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.06.2013 թ-ի թիվ 1104718 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով <Էդ. և Կար> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 18.06.2013 թ-ին կազմվել է հսկիչ գնում կատարելու վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որում մասնավորապես արձանագրվել է.

Ի կատարումն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.06.2013 թ-ի թիվ 1104718 հանձնարարագրի օ/լ Վ.Հայրապետյանի կողմից ժամը 14:02-ին կատարվեց հսկիչ գնում <Էդ. և Կար> ՍՊԸ-ի ք.Գավառ, Բոշնադյան 17ա հասցեից: Գանձապահ Լենա Վարպետյանին՝ Վ.Հայրապետյանի կողմից տրվեց տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր, որը Լ.Վարպետյանը պատճենահանեց մեկ օրինակ: Ծառայության դիմաց կանխիկ վճարվեց 100 դրամ, որից Լ.Վարպետյանը, որպես գումարի մանր վերադարձրեց 50 դրամ: Պատճենահանման դիմաց վճարված 50 դրամը Լ.Վարպետյանը ՀԴՄ չմուտքագրեց և չտրամադրեց համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: 4-5 րոպե անց ներս մտավ ընկերության տնօրեն Զազյան Հովհաննեսը, որին մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և հանձնարարագիրը: Զազյան Հովհաննեսը զազրախոսելով վերցրեց հանձնարարագիրը, կարդաց, այնուհետև մեկ օրինակը պատճենահանեց և հայտարարեց, որ հանձնարարագիրը կեղծ է ու հրաժարվեց այն ստորագրելուց: Մեր պահանջին ՀԴՄ-ից դուրս բերել <Z> հաշվետվությունը, Զազյան Հովհաննեսը հրաժարվեց դուրս բերել այն և մեզ դուրս հրավիրեց գործունեության վայրից, ինչպես նաև հրաժարվեց արձանագրությունը ստորագրելուց:

Ստուգումն իրականացնող անձանց կողմից 18.06.2013 թ-ին կազմվել է նաև ստուգող մարմնի գործողությունները խոչընդոտելու վերաբերյալ արձանագրություն:

Սույն գանգատի քննության ընթացքում պարզվեց, որ ստուգման ընթացքում ընկերության տնօրենը ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանցից պահանջել է ներկայացնել իրենց պաշտոնական լիազորությունները հաստատող փաստաթղթերը, սակայն վերջիններս չեն ներկայացրել դրանք (ծառայողական վկայականները):

Այսպիսով ընկերության տնօրենը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանցից պահանջելով ներկայացնել ծառայողական վկայականները, ըստ էության, օգտվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքից: Այսինքն, քննարկվող դեպքում առկա է մի իրավիճակ, երբ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի պահանջները, որի համաձայն ստուգումն իրականացնող անձինք պարտավոր են պահպանել տնտեսավարող սուբյեկտի՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներն ու շահերը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ընկերության տնօրենին ներկայացված պահանջները նման պայմաններում չկատարելու հանգամանքը չի կարող որակվել որպես վերջինիս կողմից ստուգող մարմնի գործողությունները խոչընդոտելու փաստ: Հետևապես, ստուգող մարմնի գործողությունները խոչընդոտելու վերաբերյալ 18.06.2013 թ-ի արձանագրությունը ևս չի կարող հիմք հանդիսանալ ընկերության տնօրենին՝ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց գործողություններին խոչընդոտելու մեջ մեղադրելու համար:

Ինչ վերաբերվում է հսկիչ գնում կատարելու վերաբերյալ 18.06.2013 թ-ի արձանագրությանը, ապա Հանձնաժողովը գտնում է, որ դրանում արտացոլված տվյալները (տեղեկությունները) չեն կարող հիմք հանդիսանալ արձանագրված խախտումն հիմնավորված համարելու համար, հետևյալ պատճառաբանությամբ:

Ինչպես նշվել է վերևում, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.06.2013 թ-ի թիվ 1104718 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասությունների սահմաններում «էդ և Կար» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011 թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում հստակ նշված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում իրականացվող գործողությունները, ինչպես նաև այդ գործողությունների արդյունքում ձեռք բերվող և ստուգման ակտում պարտադիր արտացոլման ենթակա տվյալները (ապացույցները), որոնք անհրաժեշտ են ակտով արձանագրված խախտումն հիմնավորված համարելու համար: Մասնավորապես, շրջաբերական նամակի «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում նշված է, որ հսկիչ գնումն իրականացնելուց հետո ՀԴՄ-ից դուրս է բերվում <Z> հաշվետվությունը, որից հետո կատարված վճարման արժեքը մուտքագրվում է ՀԴՄ, դուրս է բերվում կտրոն և նորից դուրս է բերվում <Z> հաշվետվությունը:

Քննարկվող դեպքում արձանագրված է միայն մատուցված ծառայության դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրելու հանգամանքը: Հսկիչ գնման ընթացքում վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրելու փաստն արձանագրելուն հաջորդող գործողությունները չեն կատարվել, հետևապես նաև ձեռք չեն բերվել այն ապացույցները, որոնք կարող էին հիմք հանդիսանալ արձանագրված խախտումն հիմնավորած համարելու համար: Ընդ որում, 28.06.2013 թ-ին կազմվել է թիվ 1104718 ստուգման ակտի նախագիծը, որով ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ»-ի 19-րդ

կետի <բ> ենթակետի պահանջները խախտելու համար կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ստուգման ընթացքում ձեռք բերված ապացույցները, որոնք ըստ էության արտացոլված են հսկիչ գնում կատարելու վերաբերյալ 18.06.2013 թ-ի արձանագրությունում, բավարար չեն և չեն հիմնավորում ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <գ>, առավել ևս, ինչպես ակտի նախագծում է սխալ նշված, <բ> ենթակետի պահանջները խախտված լինելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. <Էդ և Կար> ՍՊԸ 21.06.2013 թ-ի դիմումով բերված գանգատը բավարարել:
2. Չեղյալ համարել հսկիչ գնում կատարելու վերաբերյալ 18.06.2013 թ-ի արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

